# Արձանագրություն N 2-3

## ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08.05.2026թ.

ժամը 09:20

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Ղազարյան

Ա. Հյուսիսյան

Է. Առուստամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլյան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ա. Նալբանդյան

### 1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

---

(Մ. Աղայանց)

1.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ «Վահրամ Կնյազյան» ԱՁ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ոչ մի անհամապատասխանութուն չի արձանագրվել:

1.2 Գնման ընթացակարգի մասնակցի՝ «Ռիջիդ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

**Նմանատիպ պայմանագրերի մասով**

01.09.2024թ. կնքված N 24/09-3 պայմանագրի որպես պատշաճ կատարված տեղեկանքում նշված պայմանագրի ամսաթիվը չի համապատասխանում կնքված պայմանագրի ամսաթվին:

09.12.2024թ. կնքված N 24/12-1 պայմանագիրը հնարավոր չէ գնահատել, քանի որ չեն ներկայացվել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Ռիջիդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 11.05.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում՝ այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/9** ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

**2.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Մ. Աղայանց)

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել 12.05.2026թ. ժամը 09:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------------------------------- Մ. Աղայանց

Անդամներ՝ ---------------------------------------- Ն. Ղազարյան

---------------------------------------- Ա. Հյուսիսյան

---------------------------------------- Է. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ն. Նիկոլայան